



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 8 » Ժունիսի 2017թ.

№ 2/1043-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

Ա.ԱՐՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԵՎ Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2017 թվականի թիվ 11/2017 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության 3-րդ /Շենգավիթ, Մաշտոց/ բաժնի պետ Արթուր Աբրահամյանին և Շենգավիթի հարկային տեսչության տեղեկատվության և վերլուծության բաժնի պետ Կարինե Հովհաննիսյանին հայտարարել <<ԲԱՆԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ>>:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին.

- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ